



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՎԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԼԱՍ ՎԵԿԱՍԻ ՆՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ ՈՒ ՄՇԱԿՈՅԹԻ ԿԵԴՐՈՆԻ ՄԱՐՄՆԱՒՈՐՈՒՄԸ ԱՐԴԻՆՔ՝ ՀԱՄԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒ ՆՈՒՐԱԲԵՐՈՒՄԻ

Արեւմտեան Թեմի Ազգային Առաջնորդարանը, յատուկ հաղորդագրութեամբ մը, օրին գոհունակութեամբ մեր ժողովուրդին յայտնած էր, որ 2010 տարուան սեմին, Լաս Վեկասի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ ծխական համայնքը առած է պատմական քայլ մը, որ իբրեւ կարելոր նուաճում կ'արձանագրուի Արեւմտեան մեր Թեմի տարեգրութեանց մէջ ու հպարտութեան առիթ է բոլորիս համար:

Արդարեւ, Ազգային Առաջնորդարանի քաջալերանքով, եկեղեցւոյ ծխական համայնքը, իբրեւ արդիւնք տեղւոյն յանձնախումբին հետեւողական աշխատանքին, ինչպէս նաեւ շնորհիւ իշխանական նուիրատուութեան մը, տեր դարձաւ կալուածի մը, որուն վրայ գտնուող կառոյցները բարեփոխութեան ու պատշաճեցման ենթարկուելէ ետք, պիտի ունենանք եկեղեցի ու մշակոյթի կեդրոն մը:

Կալուածը կը գտնուի քաղաքի բանուկ մէկ փողոցին վրայ: Հասցեն է 2054 E. Desert Inn, Las Vegas, NV 89169.

Պատմական այս իրագործման առիթով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան եւ Ազգ. Վարչութեան ատենապետ Դոկտ. Կարօ Յակոբեան 20 Դեկտեմբերին այցելեցին Լաս Վեկաս ու մասնակից եղան ծխական համայնքի ուրախութեան: Առաջնորդ Սրբազանը մատուցեց Ս. Պատարագ. Ս. Սեղանին սպասարկեցին Հոգի. Տ. Ներսէս Արք. Շեխուկեան (Վենեզուելայի հայոց հոգեւոր հովիւը, որ հիւրաբար մեր Թեմը կ'այցելէր) եւ Արժ. Տ. Աւետիս Քիւյ. Թորոսեան: Ներկայ էին նաեւ Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Յանձնախումբի անդամներ: Առաջնորդ Սրբազանն ու ժողովականութեան ներկայացուցիչները այնուհետեւ հանդիպում ունեցան ծխական համայնքի զաւակներուն ու յանձնախումբի անդամներուն հետ, շնորհաւորելով անոնց աշխատանքն ու գնահատելով ձեռք բերուած արդիւնքը: Առաջնորդ Սրբազանը յատկապէս ողջունեց եկեղեցւոյ գլխաւոր բարերարը՝ Տիար Լէրի Պարնզը եւ յանուն գաղութին ու մեր Թեմին՝ երախտագիտութիւն յայտնեց անոր, որովհետեւ ի յիշատակ իր հանգուցեալ կնոջ՝ Սեդա Տէր Կարապետեան-Պարնզի, եւ ի յարգանս Տէր Կարապետեան ընտանիքի ննջեցեալներուն (որոնց կարգին, հանգուցեալ Տիկին Սեդայի երկու

եղբայրները, զոհ՝ Ցեղասպանության), ան յանձն առած է համալիրին գլխավոր բարերարութիւնը, նուիրելով 400,000 (չորս հարիւր հազար) տոլար: Ի յիշատակ Տէր Կարապետեան ընտանիքի ննջեցեալներուն, եկեղեցին պիտի անուանակոչուի Ս. Կարապետ: Անոր գմբէթը պիտի ըլլայ նման Աղթամար կղզիի եկեղեցւոյ գմբէթին. նշենք, որ Տէր Կարապետեան ընտանիքը բռնագաղթուած է Վանէն:

Ուրախութեամբ կը յայտնենք, որ շնորհիւ ծխական յանձնախումբի ճիգերուն, յատկապէս բարերարին իշխանական նուիրատուութեան, կալուածին փոխարժէքը ամբողջութեամբ վճարուած է:

ԻՆՉՊԵՍ ԻՐԱԳՈՐԾՈՒԵՑԱՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՔԱՅԼԸ

Լաս Վեկասի ծխական համայնքը սեփական եկեղեցի ունենալու ծրագիրը իբրեւ առաջադրանք ունէր երկար ատենէ ի վեր: Ծանօթ է, որ մօտաւորապէս երեք տարի առաջ, շրջանի ծխական յանձնախումբը վերակազմուած էր, գլխավորութեամբ Տիար Ատրուշան Արմէնեանի, ու գաղութին կազմակերպման գործը թեւակոխած էր նոր շրջան մը, մասնակցութեամբ ազգային-եկեղեցական կեանքին մէջ տարիներու ծառայութիւն ունեցող ազգայիններու: Զանի մը ամիս առաջ, ծխական յանձնախումբը իր ուշադրութիւնը կեդրոնացուցած էր կալուածի մը վրայ, որ յարմարութիւնը ունի բարեփոխութեան ենթարկուելու եւ վերածուելու համալիրի մը, որ պիտի բաղկանայ, ինչպէս նշեցինք, եկեղեցիէ ու մշակութային կեդրոնէ մը:

Կիրակի, 20 Դեկտեմբերին, յաւարտ Ս. Պատարագի, հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ հանգուցեալ Սեդա Տէր Կարապետեան-Պարնգի յիշատակին, անոր մահուան առաջին տարելիցին առիթով: Արարողութենէն ետք, համայնքի գաւակներուն հետ հանդիպումին, Առաջնորդ Սրբազանը վեր առաւ հանգուցեալին նուիրումն ու բազմամեայ ծառայութիւնը Լաս Վեկասի ծխական համայնքին ու հայկական միութեանց: Հանգուցեալը տարիներ շարունակ անդամ էր Լաս Վեկասի ծխական համայնքին ու ցմահ գործեց նա՛եւ սեփական եկեղեցւոյ ծրագիրը իրականացնելու համար: Այսպէսով, անոր երազը դարձաւ իրականութիւն:

ԾՐԱԳԻՐԻՆ ՅԱԶՈՐԴ ՀԱՆԳՐՈՒՄՆՆԵՐԸ

Ինչպէս նշեցինք, ձեռք բերուած կալուածը կը կարօտի բարեփոխութիւններու ու պատշաճեցման: Ներկայ վիճակով, անիկա կը բաղկանայ երկու գլխավոր բաժիններէն, որոնցմէ մէկը մօտ ատենէն պիտի վերածուի մշակութային կեդրոնի եւ անոր սրահը առժամաբար պիտի ծառայէ իբրեւ եկեղեցի, նկատի ունենալով, որ երկրորդ բաժինին պատշաճեցումը կը կարօտի համեմատաբար աւելի երկար աշխատանքի ու նիւթական յաւելեալ միջոցներու:

Ուրախ ենք յայտնելու, որ Լաս Վեկասի հայութիւնը, իր անհատ բարերարներով ու միութենական միաւորներով, ի մի խմբուած է այս ծրագիրին շուրջ: Գլխավոր բարերարին կողքին, ծխական համայնքը

նուիրատուութեան խոստումներ ունի յաջորդ քայլերուն իրականացման համար: Ծխական յանձնախումբը նոյն թափով կը շարունակէ աշխատանքը, զայն իր կատարելութեան հասցնելու նպատակով:

Ոչ մէկ կասկած, որ լաւ սկսուած գործը յաջողութեամբ պիտի շարունակուի ու մօտիկ ապագային, շրջանի հայութիւնը, իր կողքին ունենալով Ազգային Առաջնորդարանն ու մեր Թեմի ազգայինները, հանգրուանաբար իր լրումին պիտի հասցնէ եկեղեցի-մշակութային կեդրոն ծրագիրը, որ պիտի լծուի շրջանի հայութեան հոգեմտաւոր ծառայութեան:

LAS VEGAS CHURCH AND CULTURAL CENTER BECOMING A REALITY

In a previous communiqué, the Western Prelacy announced with great joy that on the threshold of the New Year 2010, the parish community of the Armenian Apostolic Church of Las Vegas celebrated a milestone, the purchase of a property that will house the future church and cultural center. This historic step was achieved through the diligent efforts of the parish council and a generous donation.

The property is located at 2054 East Desert Inn, Las Vegas, Nevada 89169, and will soon undergo renovations to convert it into a church and cultural center.

On this occasion, on Sunday, December 20th, 2009, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and Executive Council Chairman Dr. Garo Agopian visited the parish where the Prelate celebrated Divine Liturgy. Assisting at the altar were Very Rev. Fr. Nerseh Shekhougian, (Dean of the Venezuela Armenian Diocese who was on a brief visit to the U.S.) and Rev. Fr. Avedis Torossian. Members of the Prelacy Ladies Auxiliary Guild were also in attendance.

Following the church service, the Prelate and Dr. Agopian met with the parish council and community members, congratulating them on this accomplishment. The Prelate saluted the church's grand benefactor Mr. Larry Barnes, expressing his gratitude to Mr. Barnes for his \$400,000 donation to honor the memory of his late wife Seda Der Garabedian-Barnes and the memory of Der Garabedian family members, among them Seda's two brothers who perished in the Genocide. Appropriately, the church will be named St. Garabed and the dome will be a replica of the church on Akhtamar, given that the Der Garabedian family was originally from Van.

We are pleased to announce that due to the benefactor's generosity and the collaboration of community members, the property was bought with no outstanding balance.

HOW THE DREAM WAS REALIZED

The Las Vegas parish community has for years dreamt of having its own church and center. Three years ago, with the parish's re-establishment and re-organizing headed by Mr. Adroushan Armenian, this dream was once again put on the agenda. A few months earlier, the parish council began looking for a suitable property that could be converted into a church, and their efforts paid off when they found such a location.

On Sunday, December 20th, following Divine Liturgy, a requiem service was offered on the first anniversary of Seda Der Garabedian-Barnes' passing. Later during his meeting with parish members, the Prelate lauded the decades-long devotion and service of the late Seda to the Armenian community, who until her passing worked towards the dream of the Las Vegas community having its own church. And now, her dream is becoming a reality.

THE NEXT PHASE

As noted earlier, the property is in need of renovations and remodeling to convert it to a church and center. In its present state, the property consists of two major sections, one of which will soon be converted to the cultural center and its hall temporarily used for church services. The second phase of the project involves converting the other section into a church, which will require more time and resources.

We have no doubt that the community will continue to financially and morally support and encourage this project until its successful completion.